



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ  
Ն Ա Խ Ա Գ Ա Հ**

ք. Երևան

«12» հունվարի, 2018 թ

**Հ Ր Ա Մ Ա Ն № 02-Լ/Ք**

**ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻՆ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՄԱՆ ԵՎ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունվարի 22-ի N 46-Ն որոշմամբ և Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հոկտեմբերի 18-ի N 1269-Ն որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 12-րդ կետի 4-րդ ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարի 2017 թվականի հունվարի 17-ի N 23-Ա և 2017 թվականի հուլիսի 14-ի N 798-Ա հրամանները՝

**Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ.**

**1. Հաստատել՝**

1) Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) 2017 թվականի ընթացքում արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության (այսուհետ՝ ԱԻ և ՔՊ) բնագավառներում անցկացված միջոցառումների հաշվետվությունը՝ համաձայն հավելված 1-ի.

2) Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայում և այլ ուսումնական հաստատություններում վերապատրաստման կամ ուսուցման ենթակա ԱԻ և ՔՊ հիմնահարցերով պատասխանատուների (մասնագետների) և աշխատակիցների ցանկը՝ համաձայն հավելված 2-ի.

3) ԱԻ և ՔՊ ոլորտներում Կոմիտեի պատրաստման ուսումնական գործընթացի պլան – ժամանակացույցը՝ համաձայն հավելված 3-ի.

4) Կոմիտեի 2018 թ. ուսումնական տարվա ԱԻ և ՔՊ հիմնահարցերով պարապմունքների ուսումնական խմբերի և դրանց ղեկավարների անվանացուցակը՝ համաձայն հավելված 4-ի:

2. Կոմիտեի աշխատակազմի ղեկավար, ՔՊ շտաբի պետ Լ. Մարդոյանին՝

1) Ապահովել 2017 թվականի ընթացքում ԱԻ և ՔՊ բնագավառներում նկատված բացթողումների վերացումը, մասնավորապես՝ օբյեկտային վարժանքների և հատուկ տակտիկական ուսումնավարժությունների անցկացումը 2018 թվականին.

2) ուսումնական գործընթացը կազմակերպել համաձայն պլան – ժամանակացույցի.

3) ապահովել Կոմիտեի բոլոր աշխատակիցների մասնակցությունը ուսումնական գործընթացին.

4) պարապմունքներից 5 օր առաջ պլան-համառոտագրերը ներկայացնել Կոմիտեի նախագահի հաստատմանը:

3. Հրամանի կատարման հսկողությունը վերապահել Կոմիտեի ՔՊ շտաբի պետ Լևոն Մարդոյանին:

4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

2017 թվականի ընթացքում արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության բնագավառներում Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեում անցկացված միջոցառումների վերաբերյալ

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեում (այսուհետ՝ Կոմիտե) 2017 թվականի ընթացքում (այսուհետ՝ հաշվետու տարի) արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության (այսուհետ՝ ԱԻ և ՔՊ) բնագավառներում անցկացված միջոցառումները սահմանվել են Կոմիտեի նախագահի 2016թ. դեկտեմբերի 27-ի N 73-Լ/Ք հրամանով՝ համաձայնեցնելով Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության (այսուհետ՝ ՀՀ ԱԻՆ) հետ:

Հաշվետու տարվա ընթացքում արտակարգ իրավիճակների ու ԱԻ և ՔՊ բնագավառներում Կոմիտեի միջոցառումները ներառել են հետևյալ ուղղությունները.

1. Մասնակցություն ՀՀ ԱԻՆ «Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա» ՊՈԱԿ-ում անցկացվող վերապատրաստման դասընթացներին,
2. Կոմիտեի քաղաքացիական պաշտպանության ղեկավար կազմի և աշխատողների ուսուցում,
3. Ուսումնավարությունների իրականացում,
4. Մասնակցություն ՀՀ պաշտպանության նախարարության և ՀՀ ԱԻՆ կողմից կազմակերպվող միջոցառումներին,
5. ՔՊ միջազգային օրվան նվիրված սեմինար,
6. Արտակարգ իրավիճակների աշխատակցի օրվա նվիրված միջոցառումներ,
7. Հակաճառագայթային թաքստոցների պահպանության ու սպասարկման աշխատանքների իրականացում,
8. Ապաստարանների պահպանության ու սպասարկման աշխատանքների իրականացում,
9. Կազմակերպչական գործունեություն:

**1. Մասնակցություն ՀՀ ԱԻՆ «Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա» ՊՈԱԿ-ում անցկացվող վերապատրաստման դասընթացներին**

Հաշվետու տարվա ընթացքում Կոմիտեի աշխատակիցներից ոչ մեկը վերապատրաստման դասընթացներին չի մասնակցել: Կոմիտեի ՔՊ և ԱԻ պատասխանատու Ռ. Գրիգորյանը մի

քանի անգամ եղել է ՀՀ ԱԻՆ Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայում, ԱԻ և ՔՊ հարցերի վերաբերյալ զրուցել ակադեմիայի ղեկավարության և դասախոսների հետ՝ ստանալով անհրաժեշտ խորհրդատվություն:

## **2. Կոմիտեի ՔՊ ղեկավար կազմի և աշխատողների ուսուցում**

Հաշվետու տարվա ընթացքում Կոմիտեի ՔՊ ղեկավար կազմի և աշխատողների ուսուցման շրջանակներում կազմակերպվել են երկու ուսումնական խմբեր, որոնք ղեկավարել են Կոմիտեի նախագահի տեղակալը և աշխատակազմի ղեկավարը՝ մասնակցությամբ բոլոր աշխատակիցների: Անցկացվել են յոթ դասախոսություն հետևյալ թեմաներով՝

1. ՔՊ բնագավառի պետական քաղաքականությունը և բնագավառը կանոնակարգող նորմատիվաիրավական հիմքերը: ՔՊ խնդիրները – 2 դասաժամ;

2. ՔՊ կազմավորումների ստեղծումը և խնդիրները: ՔՊ կազմավորումների պատրաստականության բերման կարգը: ՔՊ կառավարման, կապի ու ազդարարման համակարգեր հիմնելու և դրանց բնականոն գործունեության ապահովման հիմնական ուղղությունները: Ազդարարման ազդանշանները – 2 դասաժամ;

3. Անհատական պաշտպանության միջոցներ – 2 դասաժամ;

4. ՔՊ պաշտպանական կառույցներ - 2 դասաժամ;

5. Տեղանքի ճառագայթային, քիմիական և մանրէաբանական աղտոտվածության պայմաններում աշխատանքների իրականացման ձևերն ու հնարքները: Ճառագայթային, քիմիական հետախուզության և բաժնեչափական սարքերի կիրառումը: Անձնակազմի գործողությունները վնասազերծման ու վարակազերծման աշխատանքներ իրականացնելիս – 2 դասաժամ;

6. Առաջին բուժօգնության հիմունքներ. մաս 1. 1 դասաժամ;

7. Առաջին բուժօգնության հիմունքներ. մաս 2. 1 դասաժամ:

## **3. Ուսումնավարությունների իրականացում**

Հաշվետու տարվա ընթացքում, նախատեսվել է օբյեկտային վարժանքի և հատուկ տակտիկական ուսումնավարության անցկացում: Հաստատվել է նաև Կոմիտեում արտակարգ իրավիճակներում գործելու պլան-ժամանակացույցը՝ համապատասխան սխեմաներով և հաշվարկներով: Տեսական և գործնական պարապմունքների միջոցով կազմավորումների յուրաքանչյուր անդամ ճշգրտել է իր մասնակցության ձևաչափը արտակարգ իրավիճակներում գործելու համար:

Ուսումնավարժության անցկացման դժվարությունները պայմանավորված են Կոմիտեում գորահավաքային նախապատրաստության ստորաբաժանման և համապատասխան մասնագետների բացակայությամբ:

#### **4. Մասնակցություն ՀՀ պաշտպանության նախարարության և ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության կողմից կազմակերպվող միջոցառումներին**

ՀՀ պաշտպանության նախարարության կազմակերպած միջոցառումներին ու ցուցադրական ուսումնավարժություններին (մասնավորապես ՀՀ մշակույթի նախարարությունում, Երևանի քաղաքապետարանում և ՀՀ Կոտայքի մարզպետարանում) մասնակցել են Կոմիտեի նախագահի տեղակալ Վ. Սահակյանը, աշխատակազմի ղեկավար Լ. Մարդոյանը և աշխատակազմի անձնակազմի կառավարման բաժնի պետ Ռ. Գրիգորյանը:

Կոմիտեի արտակարգ իրավիճակների և ՔՊ բնագավառների պատասխանատու Ռ. Գրիգորյանը մասնակցել է ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության կողմից հաշվետու տարվա ընթացքում կազմակերպած միջոցառումներին (ուսումնական հավաքներ, խորհրդակցություններ, սեմինարներ):

#### **5. ՔՊ միջազգային օրվան նվիրված սեմինար**

2017 թվականի մարտի 1-ին Կոմիտեի նիստերի դահլիճում բոլոր աշխատակիցների մասնակցությամբ կազմակերպվել է միջոցառում-դասախոսություն նվիրված Քաղաքացիական պտպանության միջազգային օրվան:

Թեմա: «Միասին քաղաքացիական պաշտպանության հետ՝ ընդդեմ աղետների»  
Զեկ. Ռ. Գրիգորյան:

Ներկայացվել է ՔՊ առաջացման պատմությունը, դերն ու նշանակությունը, նշելով, որ քաղաքացիների անվտանգության ապահովումը պետության կարևոր գործառույթներից է, իսկ ապահով ապրելու իրավունքը՝ մարդու հիմնարար իրավունքներից մեկը:

#### **6. Արտակարգ իրավիճակների աշխատակցի օրվա նվիրված միջոցառումներ**

Սեպտեմբերի 4-ին կազմակերպվել է դասախոսություն՝ «Արտակարգ իրավիճակների բնութագրումը և դասակարգումը» թեմայով (Ռ. Գրիգորյան): Միջոցառման մասնակիցներին մանրամասն ներկայացվել է արտակարգ իրավիճակների բնութագրումը Հայաստանի Հանրապետությունում և այլ երկրներում, արտակարգ իրավիճակների տեսակները, Հայաստանի Հանրապետությանը սպառնացող արտակարգ իրավիճակները, բնակչության գործողությունները արտակարգ իրավիճակների ժամանակ:

**7. Հակաճառագայթային թաքստոցների պահպանության ու սպասարկման աշխատանքների իրականացում**

**8. Ապաստարանների պահպանության ու սպասարկման աշխատանքների իրականացում**

Կոմիտեի պահեստային կառավարման կետը գտնվում է Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիայի (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ) ապաստարանում՝ Երևան, Ալիխանյան եղբայրների 2 հասցեում: Այն կարիք ունի վերանորոգման, կահավորման և անհրաժեշտ միջոցներով ապահովման, սակայն Կոմիտեում ֆինանսական միջոցների խիստ սղության պատճառով այդ հարցերը մնում են չլուծված:

Արտակարգ իրավիճակների և տարերային աղետների ժամանակ աշխատակիցների պատսպարումը կարող է իրականացվել Երևան, Օրբելի եղբայրների 22 հասցեում գտնվող շենքի (ՀՀ ԳԱԱ ֆիզիոլոգիայի ինստիտուտ) նկուղային հարկում:

ՔՊ կազմավորումները և ստորաբաժանումները, որոնք արտակարգ իրավիճակներում և ռազմական դրության ժամանակ պետք է իրականացնեն անհրաժեշտ գործողություններ, ինչպես նաև Կոմիտեի մնացած աշխատակիցները՝ ապահովված չեն անհատական պաշտպանական միջոցներով (ճառագայթային և քիմիական պաշտպանության միջոցներ, հակագազ, շնչադիմակ, բժշկական անհատական պաշտպանության միջոցներ և այլն)՝ դարձյալ համապատասխան ֆինանսավորման բացակայության պատճառով:

### **9. Կազմակերպչական գործունեություն**

Կոմիտեի նախագահի 2016 թվականի դեկտեմբերի 27-ի N 74-Լ հրամանով հաստատվել է արտակարգ իրավիճակներում և ռազմական դրության ժամանակ Կոմիտեի աշխատակիցների տարահանման հանձնաժողովի կանոնադրությունը, անհատական կազմը և տարահանման կարգը:

Կոմիտեի նախագահի հրամանով հաստատվել է նաև ՔՊ շտաբի կազմը:

Մշակվել և Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համաձայնությանն ենք ներկայացել «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի խաղաղից պատերազմական ժամանակաշրջանի փոխադրման պլանը, ղեկավար կազմի ազդարարման սխեման, կառավարման կետի կառուցվածքային տարրերի կազմը և անձնակազմի բաշխումը մշտական և հիմնական օպերատիվ կազմերի միջև, խաղաղից պատերազմական ժամանակաշրջանի փոխադրման միջոցառումների աշխատանքային գրաֆիկը հաստատելու մասին» իրավական ակտի նախագիծը: Քանի որ դեռևս ՀՀ կրթության և գիտության նախարարության նմանատիպ պլանը դեռևս չի հաստատվել, ՀՀ ՊՆ կողմից առաջարկվել է այդ հարցին անդրադառնալ նախարարության պլանը հաստատելուց հետո:

## **Առաջարկություններ**

Հաշվի առնելով հարցի կարևորությունն ու հրատապությունը, առաջարկում ենք ՀՀ արտակարգ իրավիճակների և պաշտպանության նախարարություններին համատեղ դիմել ՀՀ կառավարություն հետևյալ հարցերով.

1. Պետական կառավարման բոլոր մարմինների աշխատակազմերում ստեղծել հատուկ առանձնացված ստորաբաժանումներ, որոնց աշխատակիցները (ցանկալի է պահեստազորի սպաներ) մասնագիտորեն կկազմակերպեն պետությունը պաշտպանության նախապատրաստման, ՔՊ և արտակարգ իրավիճակներում տվյալ մարմնի գործառույթները, առավել ևս, որ ՀՀ արտակարգ իրավիճակների և պաշտպանության նախարարությունների հանձնարարականների հետևանքով որոշ ամիսներ ստացվում են մի քանի միջոցառումներ, որոնք ոչ մասնագետների միջոցով անհնար է կազմակերպել:

2. ՀՀ պետական բյուջեի քննարկման ժամանակ յուրաքանչյուր մարմնի համար նախատեսել ֆինանսական միջոցներ՝ պահեստային կառավարման կետերի և ապաստարանների վերանորոգման, կահավորման, տեխնիկական ապահովման և աշխատակիցներին անհատական պաշտպանության միջոցներով ապահովման ու սպասարկման համար:

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի նախագահի 2018 թվականի հունվարի 12-ի N 02- Լ/Ք հրամանի

**ՑԱՆԿ**

2018 ուսումնական տարում ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայում և այլ ուսումնական հաստատություններում վերապատրաստման կամ ուսուցման ենթակա ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի ղեկավար աշխատողների, ԱԻ և ՔՊ հիմնահարցերով պատասխանատուների (մասնագետների) և աշխատակիցների

h/h	Ազգանուն, անուն, հայրանուն, պաշտոնը	Ուսուցման առաջարկվող ժամկետները	Նշումներ հայտի ուղարկման վերաբերյալ (որտեղ է ուղարկված, ամիս, ամսաթիվը, համար)	Ուուցման հաստատված ժամկետները	Նշումներ ընթացիկ ուսուցման վերաբերյալ
1	2	3	4	5	6
ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայում					
1.	Սահակյան Վարդան Հայաստանի, Կոմիտեի նախագահի տեղակալ	31.05 կամ 4.10			
2.	Ասատրյան Ռուզան Մանվելի, Կոմիտեի աշխատակազմի գիտական գործունեության կազմակերպման վարչության պետ	11.10			
3.	Գրիգորյան Ռազմիկ Ռաֆիկի, Կոմիտեի աշխատակազմի անձնակազմի կառավարման բաժնի պետ	24-26.01			
4.	Պետրոսյան Յուրի Վաչագանի, Կոմիտեի կապի և ազդարարման ապահովման կազմավորման հրամանատար, Կոմիտեի աշխատակազմի քարտուղարության պետ	26-28.03 կամ 25-27.06 կամ 17-19.12			
5.	Ղարիբյան Կարեն Բորիսի, Կոմիտեի ՊԿԿ նախապատրաստման օպերատիվ խմբի ղեկավար, Կոմիտեի աշխատակազմի ԳՔՎ գիտական քաղաքականության և զարգացման ծրագրերի բաժնի պետ	26-28.03 կամ 25-27.06 կամ 17-19.12			
6.	Գալստյան Տիգրան Հովհաննեսի, Կոմիտեի նյութատեխնիկական ապահովման կազմավորման հրամանատար, Կոմիտեի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական և h/h բաժնի պետ	26-28.03 կամ 25-27.06 կամ 17-19.12			
7.	Սարգսյան Հակոբ Հովհաննեսի, Կոմիտեի աշխատակազմի ԳԳԿՎ գիտական ծրագրերի իրականացման աջակցության բաժնի գլխավոր մասնագետ	22-26.10			
8.	Սարգսյան Հարություն Հրաչիկի, Կոմիտեի աշխատակազմի ԳԳԿՎ գիտական փորձաքննության կազմակերպման բաժնի առաջատար մասնագետ	19-23.02 կամ 02-06.04			



**ՊԼԱՆ - ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ**

**ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻՆ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԱՐԱՊՄՈՆԻՏՆԵՐԻ**

ՀՀ	Պարապմունքի թեմա	Անցկացման ժամանակը	Մասնակիցներ	Պատասխանառ
1	2	3	4	5
1.	ՔՊ միջազգային օրվան նվիրված «ՔՊ խնդիրները, դերն ու նշանակությունը համապետական պաշտպանական միջոցառումների համակարգում» 1 ժամ:	մարտի 1	1-ին և 2-րդ խմբեր	խմբերի ղեկավարներ
2	«Կառավարման մարմինների գործառույթները խոշորամասշտաբ արտակարգ իրավիճակների դեպքում» -2 ժամ:	ապրիլի 4	1-ին և 2-րդ խմբեր	խմբերի ղեկավարներ
3	«Ուժեղ երկրաշարժի դեպքում աշխատակիցների պաշտպանության միջոցառումների իրականացումը և կազմակերպումը» - 2 ժամ	մայիսի 16		
4	«Ազդարարման ազդանշանները, դրանց տրման կարգն ու հաղորդման ձևերը: Աշխատակիցների գործողությունները ազդարարման ազդանշանների տրման դեպքում» -1 ժամ	հունիսի 20	1-ին և 2-րդ խմբեր	խմբերի ղեկավարներ
5	« Ռիսկի գործոնը արտակարգ իրավիճակներում: Աղետների ռիսկի կառավարումը» - 2 ժամ	հուլիսի 18	1-ին և 2-րդ խմբեր	խմբերի ղեկավարներ
6	ԱԻ աշխատակցի օրվան նվիրված «Աղետների, հրդեհի և ուժեղ երկրաշարժի դեպքում բնակչության պաշտպանության միջոցառումների կազմակերպումը» - 2 ժամ	սեպտեմբերի 4	1-ին և 2-րդ խմբեր	խմբերի ղեկավարներ
7	«Ժամանակակից զենքեր: Զանգվածային ոչնչացման զենքեր: Քաղաքացիական պաշտպանության վտանգավոր տարածքների բացահայտման, ճառագայթային, քիմիական և մանրէաբանական միջոցներից վնասազերծման ու վարակազերծման կարգը» - 2 ժամ	նոյեմբերի 7	1-ին և 2-րդ խմբեր	խմբերի ղեկավարներ

**Ա Ն Վ Ա Ն Ա Ց Ո Ւ Ց Ա Կ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՈՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԿԱ ԱԻ ԵՎ ՔՊ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐՈՎ ՊԱՐԱՊՄՈՆԻՔՆԵՐԻ ՈՍՈՒՄՆԱԿԱՆ ԽՄԲԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ**

Ուս. խմբերի համարները	Մարդկանց քանակը	Կառուցվածքային ստորաբաժանումներ, ՔՊ կազմավորումներ, պաշտոնատար անձիք, ԱԻ և ՔՊ մասնագետներ	Պարապմունքների ղեկավարները		
			Անուն, ազգանունը	Պաշտոնը	Կրթությունը
1.	17	Կոմիտեի աշխատակազմի գիտական քաղաքականության վարչության, ֆինանսանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման բաժնի, քարտուղարության աշխատակիցների մի մասը	Վարդան Սահակյան	Կոմիտեի նախագահի տեղակալ	բարձրագույն
2.	18	Կոմիտեի աշխատակազմի գիտական գործունեության կազմակերպման վարչության, անձնակազմի կառավարման ու տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի աշխատակիցներ, քարտուղարության աշխատակիցների մնացած մասը	Լևոն Մարդոյան	Կոմիտեի աշխատակազմի ղեկավար	բարձրագույն

Խումբ. N 1

1. Արամ Սահարյան
2. Կարեն Ղարիբյան
3. Անի Վիրաբյան
4. Աննա Մկրտչյան
5. Նաիրա Սուքիասյան
6. Արևիկ Խնկոյան
7. Աննա Հարությունյան
8. Նաիրա Նազարյան
9. Աիդա Խաչատրյան
10. Սուսաննա Պետրոսյան
11. Քնարիկ Հակոբյան
12. Տիգրան Գալստյան
13. Լիլյա Ղազարյան
14. Լարիսա Կարապետյան
15. Մարգարիտ Զաքարյան
16. Յուրի Պետրոսյան
17. Լիլիթ Պետրոսյան

Խումբ. N 2

1. Ռուզան Ասատրյան
2. Անուշ Հովհաննիսյան
3. Հակոբ Սարգսյան
4. Ռուզաննա Անանյան
5. Սարգիս Հայրոցյան
6. Գայանե Պողոսյան
7. Նաիրա Ղազարյան
8. Հարություն Սարգսյան
9. Մարիանա Սարգսյան
10. Տաթևիկ Բեժանյան
11. Աստղիկ Մելիք Քարամյան
12. Ռազմիկ Գրիգորյան
13. Լուսինե Մարտիրոսյան
14. Գոհար Մելիքսեթյան
15. Շուշանիկ Աղաբեկյան
16. Խաչատուր Մարգարյան
17. Վահրամ Ներսիսյան
18. Ռուզաննա Տեր Միքայելյան

**ԴԱՍԱՑՈՒՑԱԿ**

**ԱԻ ԵՎ ՔՊ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐՈՎ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ**

Խումբ N 1 2018թ. ուսումնական տարվա

Ժամկետը	Պարապմունքի թեման	Անցկացման մեթոդը	Անցկացման վայրը	Ով է անցկացնում	Նշումներ անցկացման մասին
Մարտի 1	ՔՊ միջազգային օրվան նվիրված «ՔՊ խնդիրները, դերն ու նշանակությունը համապետական պաշտպանական միջոցառումների համակարգում» 1 ժամ:	դասախոսություն	Կոմիտե	Վ. Սահակյան	
Ապրիլի 4	«Կառավարման մարմինների գործառույթները խոշորամասշտաբ արտակարգ իրավիճակների դեպքում» -2 ժամ:	դասախոսություն	Կոմիտե	Վ. Սահակյան	
Մայիսի 16	«Ուժեղ երկրաշարժի դեպքում աշխատակիցների պաշտպանության միջոցառումների իրականացումը և կազմակերպումը» -2 ժամ	դասախոսություն	Կոմիտե	Վ. Սահակյան	

Հունիսի 20	«Ազդարարման ազդանշանները, դրանց տրման կարգն ու հաղորդման ձևերը: Աշխատակիցների գործողությունները ազդարարման ազդանշանների տրման դեպքում» -1 ժամ	դասախոսություն	Կոմիտե	Վ. Սահակյան	
Հուլիսի 18	« Ռիսկի գործոնը արտակարգ իրավիճակներում: Աղետների ռիսկի կառավարումը» - 2 ժամ	դասախոսություն	Կոմիտե	Վ. Սահակյան	
Սեպտեմբերի 4	ԱԻ աշխատակցի օրվան նվիրված «Աղետների, հրդեհի և ուժեղ երկրաշարժի դեպքում բնակչության պաշտպանության միջոցառումների կազմակերպումը» - 2ժամ	դասախոսություն	Կոմիտե	Վ. Սահակյան	
Նոյեմբերի 7	«Ժամանակակից զենքեր: Զանգվածային ոչնչացման զենքեր: Քաղաքացիական պաշտպանության վտանգավոր տարածքների բացահայտման, ճառագայթային, քիմիական և մանրէաբանական միջոցներից վնասազերծման ու վարակազերծման կարգը» - 2 ժամ	դասախոսություն	Կոմիտե	Վ. Սահակյան	

## ԴԱՍԱՑՈՒՑԱԿ

### ԱԻ ԵՎ ՔՊ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐՈՎ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ

Խումբ N 2 2018թ. ուսումնական տարվա

Ժամկետը	Պարապմունքի թեման	Անցկացման մեթոդը	Անցկացման վայրը	Ով է անցկացնում	Նշումներ անցկացման մասին
Մարտի 1	ՔՊ միջազգային օրվան նվիրված «ՔՊ խնդիրները, դերն ու նշանակությունը համապետական պաշտպանական միջոցառումների համակարգում»- 1 ժամ:	դասախոսություն	Կոմիտե	Լ. Մարդոյան	

Ապրիլի 4	«Կառավարման մարմինների գործառույթները խոշորամասշտաբ արտակարգ իրավիճակների դեպքում» - 2 ժամ:	դասախոսություն	Կոմիտե	Լ. Մարդոյան	
Մայիսի 16	«Ուժեղ երկրաշարժի դեպքում աշխատակիցների պաշտպանության միջոցառումների իրականացումը և կազմակերպումը» -2 ժամ	դասախոսություն	Կոմիտե	Լ. Մարդոյան	
Հունիսի 20	«Ազդարարման ազդանշանները, դրանց տրման կարգն ու հաղորդման ձևերը: Աշխատակիցների գործողությունները ազդարարման ազդանշանների տրման դեպքում» - 1 ժամ	դասախոսություն	Կոմիտե	Լ. Մարդոյան	
Հուլիսի 18	«Ռիսկի գործոնը արտակարգ իրավիճակներում: Աղետների ռիսկի կառավարումը» - 2 ժամ	դասախոսություն	Կոմիտե	Լ. Մարդոյան	
Սեպտեմբերի 4	ԱՌ աշխատակցի օրվան նվիրված «Աղետների, հրդեհի և ուժեղ երկրաշարժի դեպքում բնակչության պաշտպանության միջոցառումների կազմակերպումը» -2 ժամ	դասախոսություն	Կոմիտե	Լ. Մարդոյան	
Նոյեմբերի 7	«Ժամանակակից զենքեր: Զանգվածային ոչնչացման զենքեր: ՔՊ վտանգավոր տարածքների բացահայտման, ճառագայթային, քիմիական և մանրէաբանական միջոցներից վնասազերծման ու վարակազերծման կարգը» - 2 ժամ	դասախոսություն	Կոմիտե	Լ. Մարդոյան	